



# ՄԱՍԼՈ ՆԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

08 դեկտեմբերի, 2016 թ.

ք. Երևան

## **Միջազգային հակակոռուպցիոն օրվան նվիրված ամենամյա մրցանակաբաշխություն «Կառավարություն-ՔՀԿ համագործակցություն» հակակոռուպցիոն համաժողով «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի փակման արարողություն**

2016 թվականի դեկտեմբերի 9-ին՝ Միջազգային հակակոռուպցիոն օրվա շրջանակներում, ժամը 09.30-18.10-ը (վայրը՝ «Արմենիա Մարիոթ» հյուրանոց, «Տիգրան Մեծ» սրահ), «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ը (ԻՀԱ) և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում կազմակերպում են հակակոռուպցիոն միջոցառում, որը բաղկացած կլինի 3 մասից:

Միջոցառման 1-ին մասում տեղի կունենա միջազգային հակակոռուպցիոն օրվան նվիրված ամենամյա հակակոռուպցիոն մրցանակաբաշխությունը, որի շրջանակներում մրցանակներ կհանձնվեն հետևյալ անվանակարգերում՝ **«Տարվա քաղաքացի», «Տարվա ՁԼՍ», «Տարվա լրագրող», «Տարվա բիզնես կազմակերպություն», «Տարվա ՔՀԿ»** և **«Տարվա երիտասարդ»**: Կհանձնվեն նաև շնորհակալագրեր Օրագրի գործընկերներին:

Մրցանակաբաշխությանը ողջույնի խոսքերով հանդես կգան և մրցանակներ կհանձնեն ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Պյոտր Անտոնի Սվիտալսկին, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի Ժողովրդավարացման ծրագրի ղեկավար Դեյվիդ Գուլետը, ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը և ԻՀԱ-ի նախագահ, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող Կարեն Զադոյանը: Մրցանակներ կհանձնեն նաև Հայաստանում Չեխիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. Պետր Միկիսկան և Հայաստանում Մեծ Բրիտանիայի փոխդեսպան Անյաս Մուրքը:

Միջոցառման 2-րդ մասը նվիրված է լինելու «Կառավարություն-ՔՀԿ համագործակցություն» հակակոռուպցիոն համաժողովին, որտեղ ամփոփվելու են Կառավարություն-ՔՀԿ համագործակցության շրջանակներում ձեռք բերված հաջողությունները և համագործակցության զարգացման հեռանկարները: Միջոցառման այս մասում ելույթով հանդես կգան ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանը, ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը և ԻՀԱ-ի նախագահ Կարեն Զադոյանը: Կքննարկվեն նաև ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարում Կառավարություն-ՔՀԿ համագործակցության հեռանկարները կենտրոնական և տեղական մակարդակներում:

Միջոցառման 3-րդ մասում տեղի կունենա Օրագրի պաշտոնական փակման արարողությունը, որտեղ ելույթներով հանդես կգան ծրագրի գործընկերները:

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում»** ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Օրագրի շրջանակներում 105 ՔՀԿ-ների և ՁԼՍ-ների համար կազմակերպվել են հակակոռուպցիոն դասընթացներ, տրամադրվել են փոքր ենթադրամաշնորհներ 20 ՔՀԿ-ների և ՁԼՍ-ների: Ստեղծվել է Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան՝ այժմ բաղկացած ավելի քան 80 ՔՀԿ-ներից: Այն առանցքային դեր է խաղում ծրագրի շրջանակներում մշակված ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսության մեջ: Վերջինիս շրջանակներում նշանակալից է Կառավարության և Կոալիցիայի համատեղ աշխատանքը՝ ապօրինի հարստացման քրեականացման և անկախ ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն մարմնի ստեղծման ուղղությամբ:

Օրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Օրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Օրագրի բյուջեն կազմում է 650 000 եվրո, որից ԵՄ ներդրումը կազմել է 585 000 եվրո, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ներդրումը՝ 31 117 եվրո:

**Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել Օրագրի հանրային կայքի համակարգող Նարինե Կարապետյանին աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00: հեռ. 540199; ֆաքս 580299; URL <http://www.armla.am>: էլ. փոստ՝ [info@armla.am](mailto:info@armla.am):**



Օրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն  
Հեռախոս՝ +37410 54 64 94  
Հեռապատճեն՝ +37410 54 64 95



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ

Օրագիրը համաֆինանսավորվում է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից  
Հեռախոս՝ +374 10 229610  
Հեռապատճեն՝ +374 10 229615

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը գործում է 1999թ.-ից, որի առաքելությունն է աջակցել Հայաստանին զարգացնելու իր ժողովրդավարական հաստատությունները և ամրապնդելու քաղաքացիական հասարակությունը՝ գործելով օրենսդրական բարեփոխումների, կոռուպցիայի և թրաֆիքինգի դեմ պայքարի, բնապահպանական, մարդու իրավունքների իրազեկման բարձրացման, լրատվամիջոցների ազատության և այլ ոլորտներում:



Իրավաբանների հայկական ասոցիացիա  
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2  
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 54 01 99  
Հեռապատճեն՝ +37410 58 02 99



Ինֆորմացիայի ազատության կենտրոն  
Հասցե՝ Բուզանյի 1/3  
Երևան, Հայաստան, 0010

Հեռախոս՝ +37410 56 03 60  
Հեռապատճեն՝ +37410 56 03 60